

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

23 Ապրիլ, 2018-ին, երեկոյան ժամը 7-ին տեղի ունեցավ Հայոց Յեղասպանութեան 103-րդ տարելիցին նուիրուած ջահերով երթ Ս. Յակոբեանց Մայր Տաճարէն դէպի Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Երթին մասնակից էին թէ օտարներ և թէ Հայեր, ովքեր պաստառներով և դրօշակներով քալեցին դէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: 20:15-ին ջահերով երթը շարունակուեցաւ դէպի Հայոց Յեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ մոմավառութիւն:

24 Ապրիլ, 2018-ին, Առաւօտեան ժամը 9-ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Հոգշ. Տ. Էմմանուէլ Վարդապետ Աթաշանեանի ձեռամբ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Յաւարտ Ս. Պատարագի, հոգեւորականաց դասը և ժառանգաւոր սաներ թափօրով և շարականի երգեցողութեամբ դէպի Եղեռնի յուշարձան քալեցին, ուր Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Ս. Աթոռոյս անունով ծաղկեպսակ մը զետեղեց Հայոց Յեղասպանութեան յուշարձանին:

Նոյն օրը երեկոյան ժամը 19:30-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս: Օրուան բանախօսն էր՝ Տիար Ռազմիկ Մարտիրոսեան: Ոգեկոչման յուշահանդէսին ժառանգաւոր սաներ, Սբ. Թարգմանչաց Վարժարանի սաներ, Հ. Ե. Մ.-ականներ և Հ. Մ. Ը. Մ.-ականներ հանդէս եկան մենեքերով ու խմբերգերով, ասմունքով ու երաժշտական նուագակցութեամբ: Յուշահանդէսը իր լրումին հասաւ Պատրիարք Սրբազան Հօր փակման աղօթքով:

ՇՆՈՐՀԱԽՈՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՐ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻՆ

9 Մայիս, 2018-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորական նամակ յղեց Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝ Տիար Նիկոլ Փաշինեանի: Նամակին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով նորընտիր վարչապետը՝ կ'ըսէ. «Դուք գիտակցաբար ստանձնելով Վարչապետի ծանր պարտականութիւնը այս դժուարին օրերուն, պիտի կարողանաք Ձեր և Ձեր համախոհներու հայրենասիրութեամբ և բարի կամեցողութեամբ, ժամանակի ընթացքին յաղթահարել և հարթել մեր Հայրենիքի և ժողովուրդի բոլոր դժուարութիւնները»:

Նամակին վերջաւորութեան Պատրիարք Սրբազան Հայրը Տէրունակոխ Սուրբ քաղաք Երուսաղէմէն իր օրհնութիւնը կը յղէ Տիար Փաշինեանի և յոյս կը յայտնէ Նորին Վսեմութիւնը օր մը Երուսաղէմ տեսնել:

ԻՍՐԱՅԷԼԻ ԽՈՐՀՐԱԳԱՐԱՆԻ ՄԷՋ ՔՆՆԱՐԿՈՒԵՅԱԻ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՅՐ

23 Մայիս, 2018-ին, Իսրայէլի Խորհրդարանի մէջ քուէարկուեցաւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցի նախագիծը: Կողմ քուէարկած են Խորհրդարանի

16 անդամներ և յաջորդ շաբաթ հարցը դարձեալ պիտի քննարկուի հորհրդարանի լիակատար նիստի ընթացքին: Խորհրդարանի ժողովի ընթացքին հրաշալի ելույթ ունեցաւ Իսրայէլի Խորհրդարանի ղեկավար՝ Տիար Եուլի Էտրլշտէյնին, ինչպէս նաեւ «Մեռեց» քաղաքական կուսակցութեան ղեկավար՝ Տիկ. Թամար Զանտպերկի: Պատրիարքութեանս կողմէ սոյն քննարկման ներկայ էին Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան և Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Յաջորդ շաբաթ Հայոց Յեղասպանութեան ճանաչման նախագիծը Խորհրդարանի օրակարգէն դուրս ձգուեցաւ: Այս առթիւ, 29 Մայիս, 2018-ին, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը նամակ յղած է Իսրայէլի Խորհրդարանի խօսնակ՝ Պրն. Եուլի Էտրլշտէյնի, որով իր յուսախաբութիւնը կը յայտնէ վերջինիս հանդէպ՝ Հայոց Յեղասպանութեան ճանաչման օրինագիծը Խորհրդարանի օրակարգէն դուրս ձգելուն համար:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՊԱՐՈՆՏԷՐ՝ ՅԻՇԱՏԱԿԻ ՊՈՒՐԱԿ

2 Յունիս, 2018-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի, Միաբանութիւն և Սաղիմահայեր կատարեցին ուխտագնացութիւն դէպի Պարոնտէր կալուածին վրայ հիմնուած Հայոց Յեղասպանութեան նուիրուած Յիշատակի Պուրակ: Պուրակի խաչքարին առջեւ նախ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյս հանգուցեալ պատրիարքներու, միաբաններու, սպասաւորներու, երախտաւորներու և բոլոր հայ ննջեցեալներու հոգիներու հանգստութեան համար, ապա Գերաշնորհ Սրբազան Հայրն իր սրտի խօսքը փոխանցեց ներկաներուն: Ուխտագնացութեան վերջաւորութեան ներկաներուն մատաղ բաժնուեցաւ:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱԽԱՐՏԻՅ ՀԱՆԴԷՍ

Շաբաթ, 9 Յունիս, 2018-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Ս. Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Բաժնի Շրջանաւարտից հանդէսը, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի և ի ներկայութեան Հոգեշնորհ Հայրերու, ծնողներու և հանդիսականներու հոծ բազմութեան: Հանդէսին յայտագիրը կը բաղկանար երկու մասերէ: Առաջինը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգի և Թարգմանչաց շարականի («Որք զարդարեցին») երգեցողութեամբ, զոր կատարեցին Շրջանաւարտները: Երեկոյի ընթացքին շրջանաւարտ սաներ հանդէս եկան իրենց սրտի շնորհակալական խօսքերով: Ապա վարժարանի փոխ-տեսուչ՝ Տիար Միհրան Տէր Մաթոսեան ներկայացուց 2017-2018 ուսումնական տարուայ կրթական տեղեկագիրը, ինչպէս նաեւ շնորհակալական խօսք ըսաւ Տեսուչ՝ Տ. Նորայր Վրդ. Գազազեանի, որ 11 տարուայ պաշտօնավարութենէ ետք կը ձգէ իր պաշտօնը: Պրն. Միհրան Սր. Թարգմանչաց Վարժարանի ուսուցչական կազմին կողմէ Հայր Նորայրի յանձնեց գեղեցիկ ձեռաց խաչ մը: Հանդիսութեան վերջաւորութեան Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Նորայր Վրդ. Գազազեան իր գնահատանքի խօսքը փոխանցեց Վարժարանի նիւթական և ոչ նիւթական օժանդակութիւն ցուցաբերող մարդոց, շնորհակալական խօսքեր ըսաւ բոլոր ուսուցիչներուն, աշակերտներուն, ծնողներուն, և յատկապէս Լուսարարապետ Սրբազան Հօր՝ իր հայրական և ներողամիտ վերաբերմունքին համար: Ապա Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախկին նախարար՝ Տիկին Հրանոյշ Յակոբեանի կողմէ պարգեւատրուած Վարժարանի

արդիւնաշատ քանի մը ուսուցիչներու յանձնեց մետալներ, շնորհակալագրեր ու պատուոգիրներ, ապա հրաւիրեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որպէսզի յանձնէ Շրջանաւարտներու վկայականներն ու առաջադեմ աշակերտներուն մրցանակները: Մրցանակներու բաշխումէն յետոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ իր պատգամը փոխանցեց Շրջանաւարտներուն: Երեկոն փակուեցաւ «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ով:

ՕԾՈՒՄ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՐԱՐԻԻՉ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Ի ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Կիրակի, 10 Յունիս, 2018-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ՝ Սըրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաներ, և Սաղիմահայեր մեկնեցան Նոր Երուսաղէմի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Պատրիարք Սրբազան Հօր, Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի և առընթերակայ հայր սուրբերու՝ Տ. Գէորգ Աբեղայ Հայրապետեանի և Տ. Ներսէս Աբեղայ Ալոյեանի զգեստաւորուելէն ետք, պահպանելով անցեալի սովորութիւնը՝ եկեղեցւոյ դրան առջեւ կատարեցին Դոնբասէքի արարողութիւն, ապա «Զողորմութեան քո զդուռն բաց մեզ Տէր» շարականի երգեցողութեամբ Պատրիարք Սրբազան Հայրը և Միաբանութիւնն ու ժողովուրդը մուտք գործեցին եկեղեցիէն ներս: Ապա ձեռամբ՝ Պատրիարք Սրբազան Հօր, օծուեցան եկեղեցւոյ նորահաստատ խորանը և բոլոր պատերը: Օծման արարողութենէ ետք մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Ժամարարն էր Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեան: Պատարագի ընթացքին Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը իր քարոզին մէջ ըսաւ. «Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին 1950-ական թուականներուն Իսրայէլի կառավարութեան կողմէ յատկաժուած է Արեւմտեան Երուսաղէմի փոքրաթիւ հայ գաղութի գործածութեան: Մօտ երկու տարիներ առաջ հաւատացեալ հայորդի մը փափաք յայտնեց ձեռնարկել այս եկեղեցւոյ ամբողջական նորոգութեան: Սակայն պայմաններու բերումով երբ ան չկրցաւ իրագործել իր այդ խոստումը, ամենաբարին Աստուծոյ շնորհիւ և միաբանութեան կամքով, Վանքս ի վիճակի եղաւ նորոգելու այս եկեղեցին, ի վայելումն մեր ժողովուրդին: Թող օրհնեալ ըլլայ կամքը Ամենակալ Աստուծոյ որ մեզ արժանացուց այս պատմական օրուան, ծառայելու իրեն և սպասարկելու իր Տան»:

«Հայր մեր»-էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք» Հայաստանեայց Մայր եկեղեցւոյ պայծառութեան և շէնութեան համար: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Սրբազան Հօր ձեռամբ օծուած 5-րդ եկեղեցին է:

ԳՊՐՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԸԻՉՈՒԹԻՒՆ

15 Յունիս, 2018-ին, յետ երեկոյեան ժամերգութեան, ձեռամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի, Ժառանգաւորաց Վարժարանի 23 ուսանողներ ստացան Դպրութեան աստիճան և յետ այսու Ս. Աթոռոյս պիտի ծառայեն իբրեւ դպիրներ: Թող Աստուած զօրացնէ անոնց և արժանացնէ գալիք բարձր աստիճաններու:

Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ կրտսեր աստիճանաւորներուն (ընթերցող-գրակարդաց, դռնապան, ջահընկալ, երգմենացի) տրուող ընդհանուր անուանում մըն է դպիրը:

Դպիր կարգելու յատուկ արարողութիւնը ձեռնադրութիւն չէ, այլ՝ տրւութիւն,

որով որոշ իրաւունքներ կը տրուին նուիրեալին: Դպիր ներկայիս կը ստանձնէ եկեղեցւոյ տարբեր ծառայողներու պարտականութիւններ. կարգուկանոն պահել, ծիսական արարողութիւններու ընթացքին կերոն (մոմակալ) բռնել, Աստուածաշունչ ընթերցել և աղօթել, կամ ըլլալ սաղմոսերգող և առհասարակ, երգեցիկ խումբի անդամ:

ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

16 Յունիս, 2018-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Ամալերջի հանդէսը: Մինչ հանդէսին սկսիլը Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի ուսանողները խմբանկարուեցան ուսուցիչներու և Լուսարարապետ Սրբազան Հօր հետ: Հանդիսութեան բացման խօսքը վստահուած էր Ընծայարանի Շրջանաւարտներէն՝ Տրց. Սարվէն Պըշաքճիի, ապա երեկոյի ողջ ընթացքին Ընծայարանի հինգ շրջանաւարտներ և Ժառանգաւորաց Վարժարանի հինգ շրջանաւարտներ հանդէս եկան իրենց ուղերձներով, ասմունքով, մեներգերով ու խմբերգերով, ինչպէս նաեւ դաշնակի գեղեցիկ կատարումներով: Հանդիսութեան վերջաւորութեան Վարժարանի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Կորին Վրդարդապետ Բաղդասարեան ներկայացուց 2017-2018 ուսումնական տարուան տեղեկագիրը, ապա հրաւիրեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որպէսզի յանձնէ Շրջանաւարտներու վկայականները ինչպէս նաեւ Վարժարանի և Ընծայարանի առաջադեմ աշակերտներու մրցանակները: Հանդիսութեան վերջաւորութեան Լուսարարապետ Սրբազան Հայրը Վարժարանին մատուցած երկարամեայ ծառայութեան համար Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարի կողմէ շնորհուած մետալը յանձնեց Օրիորդ Ֆրանսուհի Աւագեանի: Վկայականներու և մրցանակներու բաշխումէն յետոյ Տեսուչ Հայր Սուրբը հրաւիրեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, որպէսզի իր պատգամը փոխանցէ Շրջանաւարտներուն և կատարէ փակման խօսքը: Երեկոն փակուեցաւ Ս. Աթոռոյս Օրհներգով և «Պահպանիչ»-ով, ապա ներկաներ պատուեցան հիւրասիրութեամբ:

ԱՆԳԼԻՈՅ ԻՇԽԱՆ ՌԻԼԻԸՄԻ ԱՅՅԸ

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

28 Յունիս, 2018-ին, պաշտօնական այցով Սուրբ Երկիր այցելած Անգլիոյ Իշխան Ուիլիլմ, այցելեց նաեւ Սբ. Յարութեան Տաճար, ուր դիմաւորուեցաւ իրաւատէր երեք համայնքներու հոգեւոր պետերու կողմէ: Պատրիարք Սրբազան Հօր կը ներկայացնէր Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան: Սբ. Յարութեան Տաճարի Հայոց՝ Յովսէփ Արիմաթացւոյ մատուռ այցելած միջոցին Անգլիոյ Իշխանի ողջոյնի խօսք ըսաւ Սբ. Յարութեան Տաճարի Հայ Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեան և Հայոց Պատրիարքութեան կողմէ հայկական խաչ նուիրեց անոր: